

Ուսանողի վարքագծի և էթիկայի հարցերով մշտական հանձնաժողովի կանոնակարգ

Վերանայվել և հաստատվել է Դասախոսական սենատի կողմից 2016 թվականի մարտի 23-ին

Վերանայվել և հաստատվել է Ուսանողի վարքագծի և էթիկայի հարցերով մշտական հանձնաժողովի կողմից 2016 թվականի մարտի 1-ին

1. Հանձնառություններ

Ուսանողի վարքագծի կանոնակարգի շրջանակում Ուսանողի վարքագծի և էթիկայի հարցերով մշտական հանձնաժողովն ուսումնասիրում է Համալսարանի ցանկացած անդամի կողմից ներկայացված բողոքները և ներկայացնում առաջարկություններ Նախագահին, եթե բողոքները ենթակա են հետագա քննության:

2. Մշտական հանձնաժողովի կազմը

Ուսանողի վարքագծի և էթիկայի հարցերով մշտական հանձնաժողովը (այսուհետ՝ Մշտական հանձնաժողով) բաղկացած է հետևյալ անդամներից.

- ա. երկու դասախոս, որոնք ընտրվում են Դասախոսական սենատի կողմից,
- բ. երկու աշխատակից, որոնք նշանակվում են Նախագահի կողմից՝ Ուսումնական հարցերով փոխնախագահի հետ խորհրդակցությամբ,
- գ. մեկ ուսանող, որն ընտրվում է ուսանողական կազմի կողմից՝ Ուսումնական հարցերով փոխնախագահի սահմանած կարգով:

Բոլոր անդամների լիազորությունների ժամկետը երկու տարի է:

Նախագահն ընտրվում է Մշտական հանձնաժողովի կողմից: Նախագահը պետք է լինի կամ դասախոս կամ աշխատակից:

Մշտական հանձնաժողովը պետք է ձևավորվի մինչև սեպտեմբերի 30-ը:

Եթե Մշտական հանձնաժողովի անդամը չի կարողանում կատարել իր պարտականությունները, Ուսումնական հարցերով փոխնախագահը նշանակում է փոխարինող՝ տվյալ անձի մնացած պաշտոնավարման ժամկետը լրացնելու համար:

Մշտական հանձնաժողովի կազմը չի վերաբերում սկզբնական Մշտական հանձնաժողովին, որը նշանակվում է Ուսումնական հարցերով փոխնախագահի կողմից և գործում է մինչև 2016 թվականի սեպտեմբերի 30-ը կամ մինչև նոր Մշտական հանձնաժողովի կազմավորումը:

3. Գնահատման փուլ

Երբ գործը փոխանցվում է Մշտական հանձնաժողովին (տե՛ս Ուսանողի վարքագծի կանոնակարգը), կատարվում են հետևյալ քայլերը.

1. Նախնական վերանայում.

ա. Մշտական հանձնաժողովը կատարում է ստացված փաստաթղթերի նախնական վերանայում:

- i. Եթե նախնական վերանայումից հետո Մշտական հանձնաժողովը որոշում է, որ տեղեկատվությունը կամ ապացույցները կարող են բավարար լինել Ուսանողի վարքագծի կանոնակարգի խախտման (խախտումների) մասին պնդումը հիմնավորելու համար, ուսանողը անհապաղ հրավիրվում է լսումների: Տե՛ս 2-րդ կետը՝ ստորև:
- ii. Եթե նախնական վերանայումից հետո Մշտական հանձնաժողովը որոշում է, որ պնդումը հիմնավորելու համար չկա բավարար տեղեկատվություն կամ ապացույց, մեղադրանքներ չեն ներկայացվում: Մշտական հանձնաժողովը գրություն է ուղարկում Ուսումնական հարցերով փոխնախագահին՝ տեղեկացնելով, որ մեղադրանքներ չեն ներկայացվելու:

Ուսանողի վարքագծի և էթիկայի հարցերով մշտական հանձնաժողովի կանոնակարգ

Վերանայվել և հաստատվել է Դասախոսական սենատի կողմից 2016 թվականի մարտի 23-ին

Վերանայվել և հաստատվել է Ուսանողի վարքագծի և էթիկայի հարցերով մշտական հանձնաժողովի կողմից 2016 թվականի մարտի 1-ին

Ուսումնական հարցերով փոխնախագահը, համապատասխանաբար, տեղեկացնում է այդ մասին ուսանողին:

- բ. Նախնական վերանայումը պետք է տեղի ունենա մշտական հանձնաժողովի կողմից գործը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

2. Լսումներ

- ա. Մշտական հանձնաժողովը հրավիրում է ուսանողին լսումների (Էլ. փոստի կամ թղթային ծանուցման միջոցով)՝ տեղեկացնելով նրան ենթադրյալ խախտման մասին:
- բ. Ենթադրյալ խախտման մանրակրկիտ վերանայումն ապահովելու համար Մշտական հանձնաժողովը կարող է որոշել լսել բողոքին առնչվող այլ կողմերի (դասախոսակազմ, աշխատակազմ կամ ուսանողներ) տեսակետները:
- գ. Ուսանողը կարող է պահպանել լռություն լսումների ցանկացած հատվածի կամ ամբողջ ընթացքում, որի դեպքում Մշտական հանձնաժողովի առաջարկությունը կունենա նույն ուժը և ազդեցությունը, ինչպես այն դեպքում, եթե ուսանողը հանդես գար խոսքով:
- դ. Մշտական հանձնաժողովի անդամների պարզ մեծամասնությունը (կեսից ավելին) պետք է ներկա լինի բոլոր լսումներին:
- ե. Լսում(ներ)ը պետք է սկսվեն նախնական վերանայումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում և ավարտվեն 7 աշխատանքային օրվա ընթացքում:
- զ. Եթե Մշտական հանձնաժողովն իր քննարկումների ընթացքում ունի ընթացակարգային հարցեր, կարող է դիմել Ուսումնական հարցերով փոխնախագահին՝ պարզաբանումներ ստանալու նապատակով:

3. Եզրակացություններ

- ա. Մշտական հանձնաժողովը կուսումնասիրի տեղեկատվությունը, փաստերն ու տվյալները, որոնք ներկայացվել են բողոքի գործընթացում ներգրավված մասնակիցների կողմից:
- բ. Մշտական հանձնաժողովն իր եզրակացություններն ու առաջարկությունները կներկայացնի Ուսումնական հարցերով փոխնախագահին և Նախագահին:
- գ. Եզրակացությունները կայացվում են Մշտական հանձնաժողովի պարզ մեծամասնության կողմից:

4. Գաղտնիություն

Դասախոսակազմը, աշխատակազմը և ուսանողները, որոնք համաձայնում են անդամակցել Մշտական հանձնաժողովին, պարտավորվում են պահպանել տեղեկատվության գաղտնիությունը և ստորագրել գաղտնիության համաձայնագիր:

5. Վավերականություն

Վավերականությունն ապահովելու և համոզվելու համար, որ բոլոր տեղեկություններն ու տվյալները պատշաճ կերպով արձանագրվել են, Հանձնաժողովը պետք է կազմի հանդիպումների ամփոփագիր, որտեղ ներառված կլինեն ներկայացված առաջարկությունները: Հանդիպումների ամփոփագիրը պետք է ստորագրված լինի Հանձնաժողովի առնվազն երկու անդամների կողմից և պահպանվի Ինստիտուցիոնալ հետազոտությունների և գնահատման գրասենյակ: Էլեկտրոնային ստորագրությունը համարվում է վավեր:

Ուսանողի վարքագծի և էթիկայի հարցերով մշտական հանձնաժողովի կանոնակարգ

Վերանայվել և հաստատվել է Դասախոսական սենատի կողմից 2016 թվականի մարտի 23-ին

Վերանայվել և հաստատվել է Ուսանողի վարքագծի և էթիկայի հարցերով մշտական հանձնաժողովի կողմից 2016 թվականի մարտի 1-ին

6. Ընդհանուր դրույթներ

Յուրաքանչյուր դեպք ենթակա է առանձին ուսումնասիրման: Թեև բոլոր դեպքերում ապահովվում է պատշաճ ընթացակարգ, կիրառվող գործընթացները կարող են տարբերվել՝ կախված կոնկրետ դեպքի հանգամանքներից: Բոլոր վերջնաժամկետներն ու ժամանակային պահանջները կարող են երկարաձգվել՝ ըստ Մշտական հանձնաժողովի որոշման և Ուսումնական հարցերով փոխնախագահի համաձայնության:

Վերջնաժամկետների երկարաձգման հարցումները գրավոր կերպով ներկայացվում են Ուսումնական հարցերով փոխնախագահին, որը կողմերին տեղեկացնում է երկարաձգման վերաբերյալ որոշման մասին, իսկ հաստատման դեպքում՝ հայտնում է նոր վերջնաժամկետը:

Առնչվող փաստաթղթեր՝

Ուսանողի վարքագծի կանոնակարգ